



ՔԱՐՈԶ

ՄԵՍՐՈՓ Ա.ԲԵՂՋ. ԱՆԹԱ.ԲՅԱՆ

ՕՇԱԿԱՆԻ ՄԵԾ ՍՈՒՐԲԲ

(Խոսված Մայր Տաճարում նույնիսի 24-ին,
Ա. Մեսրոպ Մաշտոցի նիշատակին)

«Ենթան ձայնի և ոչ մուրացածոյ բարբառով...»:

Ա.Զ.Ա.Բ ՓԱՐԳԱՅԵՑ

Արեւի հավատացյալ ժողովո՛ւրդ
Մեկ-երկու օր առաջ Հայաստան-
յաց բազմերախտ եկեղեցին և
երախտագետ հայ ժողովուրդը
հարգանքով և խորոնկ սիրով
նշացին Օշականի մեծ սրբի խնկելի հիշա-
տակը, որի երախտիքը շատ մեծ է եղել հայ
գրի ու գրականության ստեղծման ու զար-
գացման բնագավառում։

Ամեն տարի, ամեն տեղ, հատուկ հուզ-
մուճքով, սրտագին աղոթքներով և աղջային
արժանապատվության շինչ զգացմունքների
ամրող չերմությամբ հն զիմավարում այդ
տոնը մեր ժողովուրդն ու եկեղեցին, որովհե-
տեւ այդ միմիայն Ս. Մեսրոպի տոնը չէ, այլ
նաև հայ գրի ու գրականության, հայ դպրու-
թյան տոնը։ Ս. Մեսրոպի անոնն ու զործը
իշխում են մեր ողջ պատմության վրա։

Որտեղի՞ց և ինչո՞ւ է սկիզբ առել այդ խո-
րունկ երախտափիտությունն ու հարգանքը
Օշականի մեծ սրբի հանդեպ։

Մեր ժողովուրդի պատմության մեծ ու տագ-
նապալի դարաշրջաններից մեկն է եղել Ս.

Մեսրոպի ապրած և ստեղծագործած ժամա-
նակաշրջանը։ Քաղաքական հեղհեղուկ իրա-
դրությունների մեջ, երկու հզորագույն պե-
տությունների՝ Բյուզանդիոնի և Տիգրոնի
կրունկների տակ բազաթականապես, տնտե-
սապես և հոգեպես տրորվում էր մեր ժողո-
վուրդը։ Օրակարգի վրա էր դրված մեր ժողո-
վուրդի ֆիզիկական, բարոյական, հոգեկան
լինելության հարցը։ Այդ երկու պետություն-
ներն աշխատում էին իրենց ձևերով վերջնա-
կանապես ջատել հայ ժողովուրդի միասնու-
թյունը, սպառնում էին նրա ազատությանը։
Նրա մշակությին, ազգային գոյության, վեր-
ջապես սպառնում էին նրա լույս հավատքին
ու դավանությանը։ Մեր երկիրը կիսված էր
օտարների թաթերի մեջ, արյուն էր կա-
թում մեր ազատարադ ժողովրդի սրտից
և շնչահեղձ էր լինում նրա հոգին։ Հայա-
տանյաց եկեղեցին ևս տառապալից մինակ
էր ապրում, քանի զեռ իր հավատացյալ հո-
տի հետ խոսում էր ոչ հարազատ ձախով ու
խոսքով, քանի զեռ իր ոգին չէր կարողանում
ներարկել իր որդիների հոգիների մեջ իր սե-

փական ու անմիջական միջոցներով, քանի դեռ նա ինքնիրեն չէր գտել որպես Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցի Շանր երկունքի ժամանակ էր, և հպարտությամբ պիտի արձանագրել, որ այդ երկունքը իր արժանավոր ծնունդն ունեցավ: Ծնվեցին մարդիկ և այդ մարդիկ ծնեցին գրեր և հանդիսացան մեր պահպանության, մեր մշակույթի ու գիտության, մեր դպրության ու հավատքի հրեղեն սյուները: Նրանցից մեկն էր մեծ Օշականցին:

Ս. Մեսրոպ Մաշտոցը լինելով իր ժողովրդի և իր Եկեղեցու հարազատ որդին, ունենալով քաղաքական զգոն հոտառություն, լայնաշորիզոն միաբ ու հեռատեսություն, անցավ քրտնամիտ գործունեության գալիք քաղաքական ու կրոնական վտանգները կանխելու աննահանջ վճռականությամբ: Նա տեսավ, որ իր ժողովուրդը վճռել է ապրել, ցանկանում է իր մտքի և սրափ հնատ խոսել հարազատ լիզվով, գիտակցեց, որ օտար ազգեցությունները, օտար մշակույթը մեր ժողովուրդը պետք է ընկալի միմիայն իր սեփական մտքի խողովակների միջոցով, համոզվեց, որ Քրիստոնեական Եկեղեցին Հայաստանում պետք է հայանա, որպեսզի կարողնա ապրել ու շնչել իր հոգի հնատ և իր հոտն ևս շարունակի ապրել իր թեսկուող դառն րայց ստեղծագործ կյանքը:

Օշականի մեծ վարդապետը և այն ժամանակ, երբ ձեռքում բռնել էր զինվորականի թուրք, և այն ժամանակ, երբ Քրիստոսի քառաթև խաչն էր իր ձեռքին, շնչել էր իր ժողովուրդի ոգին, հարազատ Եկեղեցու բուրումնավետ խնկի ծովար, ապրել էր նրանց երակների արդար արյունով, և այդ որու ու արյան պարտադիր թելադրությամբ նվիրվել է իր ժողովուրդն ու Եկեղեցին ապրեցնելու սուրբ գործին:

Ս. Մեսրոպ Մաշտոցը ստեղծագործ երկունքի տարիներ ապրեցավ, գտավ Հայաստանյաց Ս. Եկեղեցին և հայ ժողովուրդը քաղաքական ու բարոյական կործանարար կապանքներից ապատագրելու ամենահուայի միջոցը: Անհրաժեշտ էր զիթ ներքին, բարյական աղատությունն ունենալու և ապահովելու միջոցն ստեղծել, խիստ կարևոր էր, որ մեր Եկեղեցին արմատանար մեր ժողովուրդի սրտի մեջ: Այս անհրաժեշտությունը իմանեց նրա զգացմունքները և նա վճռականորեն համոզվեց, որ այդ գործի համար հարկ է ստեղծել սեփական գիր ու գրականություն, և տարված աղատագրելով ապահովամենքը իր ժողովուրդին: Գրականության գործը գործունեած էր ապահովության մեջ, մեր մշակույթի և գիտության պատմության մեջ, մեր արվեստի ու գրականության պատմության մեջ, մեր Եկեղեցու մասնական պատմության մեջ եղել ու

նվիրականացնում այն: Հրաշք չէ՞ր միթե, որ Ս. Մեսրոպի գրերով ապրեցավ ու ստեղծագործեց մեր Եկեղեցին, հրաշք չէ՞ր միթե երբ մեր ժողովուրդը հայ գրերի գյուտով հանդրվան առ հանգստած նվաճեց գիտության ու մշակույթի, գրականության և արվեստի շատ ու շատ դժվարամատուց բարձունքներ, հրաշք չէ՞ր միթե, երբ հայոց Ս. Եկեղեցին հարազատ լեզվով խոսեցավ իր որդիների հետ, կոչելով նրանց պայքարի իրենց անկախության և խաղաղության համար, պահեց ու պահպանեց նրանց օտար ոտնձգությունների գեմ: Հրաշք էր անկասկած, որ բազմաթիվ սպիներից հետո անաղարա մնաց մեր ժողովուրդի ազգային դիմագիծը, կենդանի մնաց մեր ժողովուրդի նախրյան շունչը, քրիստոնեության ամենակարող Աստվածը Հայ Եկեղեցու սրբազն բեմից հայերներ խոսեց մեր ժողովուրդի հետ...: Հրաշք էր, սիրելի հավատացյալներ, կենդանի հրաշք էր այդ, այս բառի բարոյական խորունք նշանակությամբ: Այդ է պատճառը, որ հայ ժողովուրդն ամելի քան հազար հինգ հայրյան տարի շարունակ ծնունդը և խորունքը է մեծ սրբի համեստ շիրմը:

Հանձն առնել ամբողջ մեկ ժողովուրդի լուսավորության գործը, զաստիարակել ամբողջ մեկ ժողովուրդի, գցել հզոր խարիսխը ամբողջ մեր հոյակապ գրականության՝ այդ գործն է միայն հանճարեղ ու տեսիլք ունեցող անհատականությունների: Պայծառացնել հարազատ Եկեղեցին, շենցնել նրա բարոյական ու կրոնական կազմը իր սիրեցյալ հոտի հետ՝ այդ էլ միմիայն սուրբ մարդկանց գործն է: Հպարտությամբ պիտի շեշտել, որ Մեսրոպ Մաշտոցն էլ եղավ այդ հանճարն ու այդ սուրբը: Գտավ հայ գիրը, հիմնեց հայ գրպարոցը, սկզբանակորեց հայ գրականությունը, բարի մշակի հավատով սերմանեց նրա աստվածային սրբազն պատգամեց իր ժողովուրդին այսպիս: «Ճանաշել զիմաստորին և զիտատ, իմանալ զրանու հանճարոյ»: Այս հանճարը խոսեց էլ անընդհատ հնել է մեր ժողովուրդի ականջին ամեն անգամ, երբ նա տվել է իր մեծ որդու անունը: Իմաստություն, գիտություն էր հարկավոր մեր ժողովուրդին ապրելու, ստեղծագործելու և հասնելու այսօրվա պայտա օրերին:

Ս. Մեսրոպ Մաշտոցի գործը մեր ժողովուրդի պատմության մեջ, մեր մշակույթի և գիտության պատմության մեջ, մեր արվեստի ու գրականության պատմության մեջ, մեր Եկեղեցու մասնական պատմության մեջ եղել ու

ժնում է որպես անխափառ անկյունաքար, որի վրա հայ ժողովուրդն ու Հայաստանյաց Եկեղեցին կառուցել են իրենց ողեզին շնչքն ամեն կողմից խուժած հոգմերի և կարկատաճարության ընդդեմ։ Այդ շինոքը այժմ առավել ամուր ու կենացառաւ է մեր երկրի զրծուխա երկնքի առաջ, մեր քաղաքական ու մշակութային կյանքի կենացուն երկանում, մեր հոգեոր ու կրոնական կյանքի կենացուն Ս. Եջմիածնում, և նույնիսկ շատ ու շատ հեռավոր ավելիք վրա, որտեղ հնում է Մեսրոպ Մաշտոցի այբուբենը, որտեղ երգիւմ են մեսրոպատառ մեր շարականները։

Օշական փոքրիկ գյուղի մեծ վարդապետը եղել է մեր ժողովրդի վաս հույսերի, ձգումների, երազների և հույզերի մշտավառ առուշանք, եղել է Հայաստանյաց Եկեղեցու շողարձակ հանթեղներից պայծառագույններից մեկը, եղել է այն լուսեղին սյունը, որը նշել է մեր ժողովրդի փրկության, ինքնուրույնության, մշակույթի, գրականության շվերելքի լայնարձակ ուղին։

Մեսրոպ Մաշտոցը եղել է մնում է «զարերու դիմաց կանգնած աղամանդյա ապառա-

ժը», որը ցույք է տալիս մեր ժողովրդին և լուսավորում է նրա ձանապարհը, ստեղծադործ միտքն ու ազատարազդ հոգին։

Օշականի մեծ սուրբը եղել է Հայաստան աշխարհի, հայ ժողովրդի և Հայաստանյաց Եկեղեցու մեծ զործի անխոնչ և բարձմարեցուն ուխաւավորը, և Հայար Շինդ հարցորդարի շարունակ հայ երաժշտապարտ ժողովուրդը եղել է նրա սրբազն շիրմի ուխաւավորը։ Միրելի ու թանկացին է եղել Ս. Մեսրոպի անունն ու հիշատակը հայ սերունդների համար։

Հայաստանյաց Եկեղեցին ևս նվիրականացնում և օրհնում է այդ սրբազն ուխարու Հավատարիմ իր հավատին և իր ավանդներին, նույնպես վճռած է եղել իր մեսրոպագիր շարականը և ծխել իր խոնկը նրա ժողովրդի համբուլներով օծված շիրմի վրա։

Թող պետք է առաջանա պայծառ մնա Ս. Մեսրոպի մեծ շիշատակը։

Թող պետք և մեր մանուկների շրթներին միշտ կարկաչի մեսրոպատառ հայոց լիզուն։

Թող պետք մեծ հոգին մեղ հետ լինի հավատան։ Ամեն։

